Կարգապահական Գործ թիվ 15032

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 185-րդ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/130-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՌՈՒԲԵՆ ՆԻԱԶՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Լիպարիտ Սիմոնյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Տիգրան Խուրշուդյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Կարեն Մեժլումյանի,

Քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի

Քննության առնելով փաստաբան Ռուբեն Նիազյանին (արտոնագիր թիվ 182) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.06.2015թ-ին Պալատի Նախագահին է ներկայացրել է տեղեկանք, այն մասին, որ փաստաբան Ռուբեն Նիազյանը (արտոնագիր թիվ182) 2014թ. սեպտեմբերից մինչև 2015թ ապրիլ (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով ունի 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ գումարի պարտավորություն:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի առաջին տեղակալի 01.06.2015թ. թիվ 117-Ա/ԿԳ-15032 որոշմամբ փաստաբան Ռուբեն Նիազյանի (արտոնագիր թիվ 454) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

02.06.2015թ-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի սեպտեմբերի 28-ին ժամը 19:12-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները</u>

Նիստի օրվա և ժամի մասին փաստային և էլեկտրոնային հասցեներով ծանուցվել է փաստաբան Ռուբեն Նիազյանը, սակայն նիստին չի ներկայացել և բացատրություն չի ներկայացրել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Ռուբեն Նիազյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 26.12.1993թ.:

Նշված փաստը հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2015թ. տրամադրված տեղեկանքով:

2) սույն կարգապահական վարույթի հարուցման ժամանակ փաստաբան Ռուբեն Նիազյանն ունեցել է 40.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2014թ. սեպտեմբերից մինչև 2015թ ապրիլ (ներառյալ) ամիսների համար:

Նշված փաստը հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.06.2015թ. ՀՀ Փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով:

3) փաստաբան Ռուբեն Նիազյանը 2014թ. սեպտեմբերից մինչև 2015թ. ապրիլ (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ գումարի պարտքն ամբողջությամբ վճարել է:

Նշված փաստը հաստատվում է ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահ Աիդա Աբրահամյանի կողմից 25.09.2015թ-ին տրամադրված տեղեկանքով:

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Ռուբեն Նիազյանի (արտոնագիր 182 ստացված 26.12.1993թ.) նկատմամբ 2006-2015թթ ընկած ժամանակահատվածում 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ անդամավճարի պարտք ունենալու մասով, որը՝

- Պալատի Խորհրդի 13.11.2009թ. թիվ 28/6 որոշմամբ կարգապահական վարույթը կարճվել է՝ արտոնություն կիրառելու հիմքով,

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Ռուբեն Նիազյանի նկատմամբ կարգապահական գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Պալատի խորհրդի 20.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարներիի վճարումների վերաբերյալ Կարգի

(Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետի՝ «Առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման: Երկրորդ կամ հետագա ցանկացած անդամավճարը չվճարելու խախտման դեպքում՝ անկախ կարգապահական վարույթն հարուցելուց հետո պարտքի մարման հանգամանքից, կարգապահական վարույթն այդ հիմքով չի կարող կարճվել»:

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2015թ-ի տեղեկանքից և դրան կից հավելվածից հետևում է, որ փաստաբան Ռուբեն Նիազյանի (արտոնագիր թիվ 182) նկատմամբ նախկինում չի կիրառվել Պալատի խորհրդի 20.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարներիի վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետը:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.7-րդ և 39.9-րդ հոդվածներով, Պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան՝ Ռուբեն Նիազյանի (արտոնագիր թիվ 182) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ Պալատի խորհրդի 20.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարներիի վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետի՝ հիմքով:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին հանձնարարել՝ սույն որոշման մասին իրազեկելու փաստաբան Ռուբեն Նիազյանին:

<u>Ծանոթություն՝</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումն ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
Խորհրդի նիստը նախագահող՝ Լիպարիտ Սիմոնյան